Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՌՈՒՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(7 հոկտեմբերի 2017 թ.)

Գերաշնո՛րհ Լեոնիդ եպիսկոպոս,

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Փառք եւ գոհություն ենք բարձրացնում առ Աստված Երեւանում Ս. Խաչի բարձրացման ռուսական եկեղեցու օծման այս գեղեցիկ առիթով: Դեռեւս վառ է մեր հիշողության մեջ 2010 թվականի մարտի 18-ը, երբ այս վայրում մեր հոգեւոր եղբայր ի Քրիստոս Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքի հետ միասնական աղոթքով կատարեցինք սույն գողտրիկ եկեղեցու հիմնարկեքի արարողությունը:

Այսօր, ահավասիկ, հայոց հողի վրա վեր խոյացած այս ռուսական եկեղեցին իր առաջին զողանջն է հնչեցնում՝ Աստծո դուռը հրավիրելով իր զավակներին՝ նրանց կյանքի ընթացքին շարունակ բաշխելու Աստծո սերն ու օրհնությունը:

Յուրաքանչյուր նորակառույց սրբազան տաճար, իբրեւ տուն աղոթքի, իր շուրջը համախմբելով հավատացելոց եւ կազմակերպելով նրանց ծխական կյանքը, դառնում է նախ եւ առաջ ջինջ ակունք աստվածային շնորհի եւ ողորմության, դեպի հավիտենական կյանք եւ Աստծո արքայություն առաջնորդող մի տերունապարգեւ ճանապարհ: Եվ որքան առատանում են սրբազան տաճարները մեր կյանքում, այնքան բազմանում է Աստծո ներկայությունը մեզանում՝ երկնառաք օրհնությամբ, հավատի բարի գործերով եւ սիրո, համերաշխության ու հանդուրժողականության մշտահունչ պատգամով:

Սիրելիներ, այս եկեղեցին վկայությունն է հայ եւ ռուս ժողովուրդների բազմադարյա եղբայրության, դավանած ընդհանրական արժեքների,

պատմության մեջ համատեղ արձանագրած փառավոր ու դժվարին էջերի եւ այսօրվա գործակցության: Այն քարակերտ արտահայտությունն է Հայաստանյայց Առաքելական եւ Ռուս Ուղղափառ Քույր եկեղեցիների սերտ բարեկամության, որի պտուղն են նաեւ խաղաղության պայմաններում հայոց հողում եւ Ռուսաստանի տարբեր քաղաքներում բարձրացած այլ եկեղեցիներ եւ մատուռներ:

Այս պահին մեր շնորհավորանքներն ենք հղում մեր հոգեւոր եղբորը՝ Նորին Սրբություն Կիրիլ Պատրիարքին՝ մեր եկեղեցիների բարեկամության տարեգրքում արժանի տեղ գրված այս օգտաշատ իրագործման առիթով: Մեր շնորհավորանքն ենք բերում նաեւ Հայաստանում Ռուս Ուղղափառ Եկեղեցու համայնքների կառավարիչ, Վլադիկովկասի եւ Ալանիայի Գերաշնորհ Լեոնիդ եպիսկոպոսին, ում առիթ ունեցանք ճանաչելու անցնող ամիսներին իբրեւ Քրիստոսի Եկեղեցու ազնիվ ու նվիրյալ սպասավորի:

Սիրելի Սրբազան, մեծապես գնահատում ենք Հայ եւ Ռուս Եկեղեցիների հարաբերությունների առավել սերտացմանը եւ ամրապնդմանն ուղղված Ձեր ջանքերն ու ծրագրերը եւ մաղթում բեղուն ծառայություն Հայաստանում:

Հայրապետական Մեր օրհնությունն ենք փոխանցում Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության արտակարգ եւ լիազոր դեսպան Իվան Վոլինկինին՝ մեր երկրների եւ Եկեղեցիների մերձեցման եւ հարաբերությունների սերտացման, ինչպես նաեւ այս եկեղեցու կառուցման գործում իր ներդրումի համար:

Արեւշատ կյանքի մաղթանքով Մեր հայրական օրհնությունն ու գնահատանքն ենք բերում նաեւ եկեղեցու բարերար, ռուսաստանաբնակ հավատավոր հայորդի տիար Արա Աբրահամյանին:

Քույր Եկեղեցու սիրելի բարեպաշտ զավակներ, վերստին շնորհավորելով ամենքիդ եկեղեցու բացման առիթով, մաղթում ենք շեն ու պայծառ պահել ձեր Ս. Եկեղեցին եւ ձեր ընթացքը՝ հաստատուն առ Տեր մեր Հիսուս Քրիստոս առաջնորդող օրհնյալ ճանապարհների վրա:

Մեր աղոթքն ենք բարձացնում առ Աստված՝ հայցելով Ամենողորմ Աստծո հովանին հավատակից մեր երկու բարեկամ ժողովուրդներին, Հայաստանի Հանրապետությանը եւ Ռուսաստանի Դաշնությանը: Թող մեր Տիրոջ առատ շնորհներով ու օրհնությամբ միշտ պտղաբերի Ռուս Ուղղափառ եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցիների գործակցությունը՝ ի փառս Աստծո եւ ի մխիթարություն մեր բարեպաշտ հավատացելոց:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ. ամէն:

«Որքան առատանում են սրբազան տաճարները մեր կյանքում, այնքան բազմանում է Աստծո ներկայությունը մեզանում երկնառաք օրհնությամբ…»